

նիշերը տանք ժե. դարուն մեծ երաժիշտ-
ներու գործերուն: Տեսանք թէ ինչպէս Ca-
rissimi le Monteverdi կ'ըլլան յաջորդաբար
oratorio-ի և opéra-ի ներկայացուցիչները
ժե. դարուն: Տեսանք նաև թէ ինչպէս ի-
րենց յաջորդները (Scarletti Խաչիոյ մէջ -
Lulli Ֆրանսայի մէջ) կը զարգացնեն իրենց
արուեստներուն սկսած գործը: Բայց՝ որ-
քան ալ մեծ ըլլան այս երաժիշտները, և
որքան ալ փայլուն գործունէութիւն չըր-
աններ ունեցած ըլլան, իրենց գործերուն
մէջ կայ մեծ պակաս մը: Իկզ մեծ պակասը
թերութիւնը, գրական կտորներու և թա-
րերգութեանց առանց ներդաշնակ կապա-
ցութեան և առանց անոնց խորքը թափա-
ցելու, պատահական հրաժշտութեան մը
բարձրացնելն է: Օրինակի համար, Carissi-
mi-ի ամբողջ գործը, կ'ամփոփուի մէկ ան-
ժամանակ recitative. բայց իր մեծ գործե-
րուն զանազան մասերը ներդաշնակ և շա-
րունակական ամբողջութիւն մը չեն կազ-
միր, և ոչ ալ recitative-ներուն բառերն ու
նկարանկները իրենց խորքով նոյն գաղա-
փարը կ'արտայայտեն, կամ զիրար կ'ամ-
բողջացնեն: [Իսկ որպէսզի բառերու և ն-
րաժշտութեան իրական ներդաշնակ կա-
պակցութեան, և վարպետ ընդհուպում մը
տեսնենք պէտք է գիտնենք Wagner-ի] Ca-
rissimi-ի գործերուն ուրիշ մէկ կարեւոր
յատկանիշը այն է թէ իր գործերը դուռ
ձայնական գործեր են: Այս ըսել չէ թէ
գործիքներու ձայնակցութիւն չկայ, այլ՝
թէ երաժշտական ամբողջ շահականութիւնը
մարդկային ձայնին տրուած է, շատ ան-
կարեւոր երկրորդական մաս մը ձգելով գոր-
ծիքներուն: Վերոյիշեալ յատկանիշները ոչ
միայն Carissimi-ի գործերուն են, այլ բո-
լոր ժ.Պ. և ժե. դարերու երաժիշտներու
գործերուն ալ միանգամայն:

Մինչև այժմ մենք տեսանք թէ ինչ-
պէս երաժշտութեան օրրանները հանդիսա-
ցան Ֆրանսա, Իտալիա, և թէ ինչպէս ի-
տալական, ֆրանսական և անգլիական ե-
րաժշտական ազգային գաղափարները հաստա-
տեցան: Հիմա կարգը եկած է ուրիշ եր-
կիրի մը, թերեւս աւելի խորունկ կերպով
երաժշտական, երաժշտութեան օրրանը, և
ուսովորան հանդիսանալ: ԺԸ. դարուն ըս-
կիպն է որ կը հիմնուի գերմանական ազ-
գային երաժշտական գաղափար, որ կը յառ-

ԼԵՋՈՒՍԳԻՏԱԿԱՆ

ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՐԷՆ(Ն)

Այս վերապահութեամբ ընդունելով ու-
րիշ երգերի հարազատութիւնը, անցնենք
նրանց ընտելութեան:

Ամբողջ հատակոտորների 59 տողերի
մէջ մենք գտնում ենք ընդամենը 183 բառ,
որոնց այբուբենական ցանկը հետեւեալն է
ապա՝ 49, 51, ազգ՝ 16, 23, աչն՝
տես զիւցաչն, վիշապաչն, Ալանք՝ 16,
17, 26, 31, ամենայն՝ 47, այլ՝ 20, այր՝
15, անդ՝ 52, անցանել՝ 29, 45, աչագեղ՝
17, աչկունք՝ 9, ապարանք՝ 44, առաւտ՝
54, ասել՝ 15, արագ՝ 33, Արգաւան՝ 38,
41, արեգակն՝ 9, արի՝ 27, արծուի՝ 29,
արտախուր՝ 37, Արտաշատ՝ 44, Արտաշէն՝
15, 24, 27, 34, 41, 43, Արտաւազդ՝ 39,
43, Արտիմէզ՝ 13, արքայ՝ 14, 27, աւե-
րակ՝ 43, աւերել՝ 58, բան՝ 17, բանակ՝ 33,
բանալ՝ 20, բարձք՝ 38, բիւր՝ 25, բլուր՝
12, բոց՝ 5, 6, 8, գաւաւ՝ 11, գեղեցիկ՝
27, գետ՝ 11, 13, 29, 58, գէս՝ տես Վարդ-
գէս, գնալ՝ 10, 45, 46, գողանալ՝ 39, գոր-
ծել՝ 41, գտանել՝ 43, դեւ՝ 40, դիւցազն՝
19, 20, դեւել՝ 40, դու՝ 46, 49, քեզ՝ 15,

(*) Շարունակաբար՝ մեծամեծ հեղինակ Վառ-
մուրիւն ձայն Լեզուի՝ գործին (Ժ. և Ժ. Ժ.
Կրիլ):

կանչուի յաջգի մինչև այն ատեն անծա-
նօթ իջնութեամբ, ներշնչումի մինչև այն
ատեն անհասանելի նկատուող խորունկու-
թեամբ, և երաժշտական գիտութեան ան-
նման խորունկ ճանաչողութեամբ: Գերմա-
նական երաժշտութիւնը բախտատար
դանդաղ զարգացումէ մը վերջ կը պայթի
յանկարծ, նոր հորիզոններ բանալով երա-
ժշտական գաւառի նկատմամբ, և արտա-
գրելով երկու մեծ հանճարներ՝ J. S. Bach,
և G. F. Handel:

ՕՆԵԼԻԻ ՌԻՉՈՒՐԼԵԱՆ

(Շարունակելի՝ 4)

47, գեղե՛ 50, գոռն՛ 14, գուսար՛ 17, ելանե՛ 4, 5, եկ՛ 15, 17, եղեգե՛ 3, եղեգե՛ 4, 5, եղե՛ 55, եղջերու՛ 55, ես՛ 48, ինձ՛ 53, երկին՛ 1, երկիր՛ 1, 47, երկն՛ 3, երկնե՛ 1, 2, երկրքին՛ 23, Երուանդ՛ 14, եւ՛ 2, 3, 6, 9, 21, 22, 24, 25 հեռ, զարմ՛ 20, զի՛ 19, է՛ էին՛ 9, 13, ընդ՛ 4, 5, 26, 29, 47, ընկենու՛ 31, Թագաւորի՛ 48, Թեւ՛ տես սրաթեւ, Թմբկի՛ 56, Թշնամութիւն՛ 22, Թումար՛ 58, Իբրեւ՛ 57, Իսկ՛ 59, Իւր՛ 33, 59, Ինե՛ 42, Լոյս՛ 52, Խարգաւանակ՛ 42, Խարտեաշ՛ 6, Խաւարձի՛ 37, Խաւարտ՛ 37, Ժառանգեցանե՛ 21, Ժրթանի՛ 2, Ժրթան՛ 53, Ժող՛ 2, 3, 59, Ժուխ՛ 4, 53, Կալցին՛ 50, Կամ՛ 21, Կայցես՛ 52, Կարգ՛ 21, Կարմրիկ՛ 3, Կենդաւնութիւն՛ 20, Կերտ՛ տես Մարակերտ, Կոյս՛ 26, Կոփե՛ 14, Կոե՛ 14, Կազար՛ 25, Կանե՛ 28, Կասուցանե՛ 33, Կաստատե՛ 23, Կատուած՛ 10, Կարեկանե՛ 56, Կարու՛ 56, Կարանութիւն՛ 35, Կաւանի՛ 17, Կեծանե՛ 27, 49, Կեր՛ 7, Կինանալ՛ 44, Կուր՛ 7, Դգե՛ 30, Դաշ՛ 41, Դանուկ՛ 10, 39, Մասիս՛ 49, 51, Մարակերտ՛ 45, Դարգարիտ՛ 35, Մարք՛ 45, Դեք՛ 56, Դէջ՛ 23, 45, Դէլք՛ 31, 32, Դի՛ 52, Դի՛ 19, Դինչ՛ 46, Դորուք՛ 8, Եղթե՛ 16, Ելարտենական՛ 22, Երթանք՛ 59, Ես՛ 7, 45, Եւաւարդ՛ 51, Եոյն՛ 42, Եստե՛ 12, Զատ՛ 32, Զեկ՛ տես շիկափոկ, շիկափոկ՛ 28, 30, շինե՛ 45, Ծրէշ՛ 12, Դ՛ 53, Դւմ՛ 48, Դշ՛ 19, 43, Դսկէ՛ 28, 30, Դսկի՛ 34, Դր՛ 16, 57, Դրդի՛ 43, Դրպէս՛ 29, Դւնե՛ 3, 7, 8, Դուստի՛ 24, Կահե՛ 21, Կատանեկիկ՛ 6, Կատանի՛ 18, Կատու՛ 41, Կարան՛ 28, 30, Կէս՛ տես Դրպէս, Սաթենիկ՛ 35, 36, Կհաւ՛ 27, Կէք՛ 57, Կիզալ՛ 57, 59, Կուր՛ տես սրաթեւ, Կսորուկ՛ 21, Կսրաթեւ՛ 29, Կազե՛ 55, Կազե՛ 6, 55, Կասն՛ 19, Կարդ՛ տես Վարդգէս, Վարդգէս՛ 10, Կեր, Ի վեր՛ 49, 51, Կիշապ՛ 42, Կիշապաղի՛ 39, Կտա՛ 18, 24, 53, Կաւար՛ 42, Կանե՛ 47, 51, Կեղ՛ 34, Կեղալ՛ 34, 35, Կեղեկիկ՛ 44, Կենւա՛ 36, Կենեանք՛ 36, Կեսանե՛ 52, Կիկին՛ 36, Կից՛ 37, Կուհայ՛ գուռ, 11, Կրդատ՛ 57, Կրամաքեցուցանե՛ 58, Կրեցուցանե՛ 32, Կրպուկ՛ 32, Կրեսայուքիւն՛ 34, Կրոխանակ՛ 40, Կրոկ՛ տես շիկափոկ, Կրոզ՛ 4, 5, 56, Կրդաք՛ 13, Կրդ՛ 15, 16, 23, 24, 43, Կրդ՛ 50, Կրդազգի՛ 26, Կրասալ՛ 11,

13, քէն՛ 19, օղ՛ տես Դսկէշ, օրէն՛ 19, օրիորդ՛ 26, Ի՛, 32.

Այս 183 բառերից 16 հատը յատուկ անուն է, 167 հասարակ անուն, Յատուկ անուններից երկուսը (Աւանք և Մարք) հայկական չեն, Եթէ բոլոր բառերը վերածենք իրենց արմատական ձևերին (օր. վարդ գին հաշուել երկուս բառ, որովհետև կազմուած է վարդ և գին բառերից. ընդ հալատակը եղեցիկ, պատանեկիկ, օղալ, չհաշուել, ուրովհետև արգէն ունիւք (եղեցի, պատանի, տեղ արմատականիցը), այն ժամանակ կ'ունենանք ընդ աւելնը 174 արմատական բառ, որոնք ցուցականում ստորագծուած են և ըստ ծագման բաժանուած են հետեւեւել ձևով.

բնիկ հայերէն բառեր 56 32%
պարսկերէնէ փոխառեալ 36 22%
յունարենէ փոխառեալ (մարգարիտ) 1
անծանօթ ծագումով (խալիքան ևն) 78 45%
ասորական (քաղաք) 1
ասորական (ցամաք) 1

Այս տախտակից հետեւում է որ վերապատանական հայերէն լեզուի մէջ խալտեան և հնգերկրպական բառերը կազմում էին մեծամասն տոկոսը. պարսկերէն փոխառութիւնները թէև ազգային գերազանցելու էին բնիկ հայերէն բառերից (751 ընդգէմ 600ի), բայց այդ շրջանին բուն հայկական բառերից զուրկ պակաս էին. իսկ ասորական փոխառութիւնները զուրկ այնքան քիչ էին, որ համեմատութիւնմբ բնիկ, պարսիկ ու խալտեան բառերի՝ տոկոս էլ չէին կազմում: Զարմանալի է որ այդ հընազոյն ժամանակից զենիք նաև մի յունական փոխառեալ բառ (մարգարիտ), որ լեզուի պատմութեան հետ համաձայնեցնելու համար պէտք է համարել աւելի հոգով մշական փոխառութիւն, քանի որ Լատին նական margarita, margaritan ձևերն զուրկ են Կրկերների և Տակկոսոսի ժամանակից գործածական են:

Այս ամբողջ եզրակացութիւնը համաձայն է այն պատկերին, որ գծել էինք նախորդ 13 ժողովներում, հայերէն լեզուի պատմութեան վերաբերմամբ, և հաստատում է նրանց ճշտութիւնը փաստացի կերպով:

ժԵ. Գ Լ Ո Ի ՈՒ

ՈՍԿԵԴԱՐԵԱՆ ՀԱՅԵՐԵՆԷՆ

Առաջին անգամ հայերենը գրի է առնել Ն. Գարի սկիզբը մեր գրականության հիմնադիր Մեսրոպ Մաշտոց վարդապետի, իր աջակից Սահակ կաթողիկոսի և սրանց գործակից զանազան, աշակերտների ձեռքով:

Առաջին հայերեն խօսքը որ Մեսրոպը իր ձեռքով գրեց նդեխայում, հետևեալն է.

Առալիք Սողոմոնի

Որդւրյ Դաւթի քաջաւորի խաւայելի

Գլխի Ա.

Ճանաչել զիմաստութիւն եւ զխառտ, իմանալ զբանս հանճարոյ, ընդունել զգարձուածս րանից, ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ, եւ ուղղել զիրաւունս: Զիտացէ անհեղաք զիտրագիտութիւն, մանկանց տղայոց զմիտս եւ զհանճար: Որոց իբրեւ լուսիցէ իմաստունն՝ իմաստնալոյն լիցի, իսկ որ հանճարեղն իցէ զառաջնորդութիւն նստացի, ի միտ առցէ զառակ եւ զբանս խորինս, զճառս իմաստնոց եւ զառակս եոցա: Սկիզբն իմաստութիւն երկու Տեառն, հանճար քարի ամենեցուն որ առնեն զնա: Կաշտոն թարի առ Աստուած՝ սկիզբն զգոհութեան. զիմաստութիւն եւ զխառտ ամպարիշտք անգոսննն:

1530 տարի առաջուս հայերէնի պատկերն է այս, բայց անշուշտ էլ աւելի հին է նա, քանի որ ճիշտ նման է վիպասանական հայերէնին և քանի որ մի լեզու չի կարող մի օրում փոխելու առնել:

Ըստ արուստ լեզուները ենթակայ են մշտական փոփոխութեան, այս շրջանի հայերէն լեզուն էլ անպաշտիս պիտի կրէր, այլեւայլ փոփոխութիւններ: Լեզուական յայտնի տարբերութիւններ տեսնոււմ են քայն հայերէնի՝ որ Մեսրոպեան դպրոցի արտագրութիւնն է փոքրուս և այն հայերէնի միջև՝ որ Մեսրոպի, Խաչակի և Երանց անմիջական աշակերտների մահից յետոյ գրի առնուեց: Առաջինը կոչուում է Ոսկեղարսեան հայերէն և տեսոււմ է Ն. Գարի սկզբից մինչև կէսը (460 փ.), իսկ երկրորդը կոչ-

ւում է յետին կամ յետոսկեղարեան հայերէն, որ սկսոււմ է 460 փոքից և ունի զառնազան շրջաններ:

Մենք այս գլխում պիտի խօսինք Ոսկեղարեան հայերէնի մասին:

Այն բոլոր գործերը, բնագիր կամ թարգմանական, որ հասել են մեզ Ոսկեղարից, թուով 33 են և ըստ իրենց շեշուական յօրինուածութեան կամ ոճի՝ բաժանուում են 4 դասի.

Ա. դասը կոչուում է Յզնկեան և պարունակում է հետեւեալ գործերը. — Աստուածաշունչ, Յզնիկ, Ոսկեբերանի Մեկնութիւն Նսայեայ, Սաղոսաց, Մատթէի, Պողոսի, Ժուով, Սերիւրանոս, Նւսերեայ իմաստաւոյ Ժառք, Կիւրդի Աղեքսանդրացւոյ Մեկնութիւնք Ս. Կրոց, Եւսեբիոսի Քրոնիկոն, Սերոնիմոսի յառաջաբան Աստուածաշունչ գրոց, Հիւպոդիոս Բոստրացի, Կրիզոստի Նիոկիստացւոյ խօսք ի Մնուէնդ, Վարք Հարանց Արիստիդես, Աթենացւոյ Զատագովութիւն, Կանոնագիրք, Արաբամ խոստովանողի Վկայք Արեւելից եւ այլ վկայութիւններ, բոլորն էլ թարգմանութիւն՝ բացի Նզնիկից:

Բ. դասը կոչուում է Եփրեմեան և պարունակում է հետեւեալ գործերը. — Եփրեմ Ասորւոյ Մեկնութիւնք Հին Կտակարանի, Համաբարբառ, թարգմանութիւն Աւետարանի, Մեկնութիւն Պործոց Առաքելոց և Թղթոցն Պողոսի, Ժառք և Կցուողք Եւսեբիոս Կեսարացւոյ Պատմութիւն Եկեղեցական, Զգոնի Ժառք, Զննորայ Ամթաւոյ Ժառք, Այլթաւայի Ռուհայեցւոյ Ժառք, Հաբուքնա Աղեքսացի, Իգնատիոս Հայրապետի Թուղթք, ընդ ամէնը 13 կտոր, բոլորն էլ թարգմանուած ասորերէնից:

Գ. դասը կոչուում է Կիրեղեան և պարունակում է հետեւեալ գործերը. — Կիրեղ Նորուստեմացւոյ Կոռնթ. Ընծալութեան, Բարսեղ Կեսարացւոյ Վեցօրեայք, Պատարագամատոյց, Ոսկեբերանի Մեկնութիւն Ազգանուն, Եւագր Պոնտացի, Եւթաղ. Թուղթք Սահակայ և Մաշտոցի Պատմութիւն Հարանց Եփրատացւոյ, ընդ ամէնը 8 կտոր, առհասարակ թարգմանութիւն յունարէնից և ասորերէնից:

Դ. դասը կոչուում է Ագաթանգեղեան և պարունակում է հետեւեալ գործերը. — Ագաթանգեղոս, Կորինե Բուզանդ, Մա-

կարայեցիք ընդ ամէնը 4 կտոր, շատը բը-
նագիր, փոքր մասը թարգմանական:

Այս չորս դասերի յատկութիւններն են,
եղիկականը բոլորից կանոնաւորը, յստակը,
արուեստաւորն ու գեղեցիկն է. եփրեմեանը
ամէնից պարզն ու հասարակը. կիրեղեանը
ներկայացնում է բարեխառն ոճ և բռնում
է երկուսն միջին տեղը. Ակաթանգեղեանը
պերճ, բազմազարդ, մթին ու յաճախ փն-
կահոն:

Տալիս ենք չորս դասերից մի քանի օ-
րինակ՝ ընտրելով ամէնից աւելի բնորոշ
ները.

Ա. եղիկական դաս

1) Յորժամ գաներեւութէն...

տե՛ս եղիկ, էջ 5-18

2) Հրգիհ

տե՛ս Ոսկերեբանից, Եփեմացոց

էջ 781-2

Բ. եփրեմեան դպրոց

յապաշխարութիւն Նիհուէացոց

տե՛ս Եփրեմ, հատոր Դ, էջ 107-124

Գ. կիրեղեան դպրոց

տե՛ս Վեցօրեայք, էջ 78-80

Դ. Ակաթանգեղեան դպրոց

տե՛ս յառաջաբանը:

Ոսկեղաբեան գրութեանքները թէ՛ն այս-
պէս ոճով գանազան կամ իրարից տարբեր,
բայց բառարանով ու քերականութեամբ ի-
րար հետ բոլորովին նոյն են: Յետին հայե-
րէնից նրանք տարբերում են շատ դրօշ
գծերով. այնպէս որ կարելի է որեւէ գըր-
ուածք լեզուից գատնելով որոշել անմիջա-
պէս թէ որ ժամանակի է պատկանում: Այս
տարբերութիւնները բաժանում են երկու
կարգի. ներքին և արտաքին: Ներքին տար-
բերութիւններն են լեզուի ճոխութիւն, ա-
ստութեան առատութիւն, քերականական
կանոնների միօրինակութիւն, դարձուած-
ների վայելչութիւն և այլ այնպիսի յատ-
կութիւններ, որոնց կարելի է վարժուիլ
միայն յաճախակի ընթերցումով: Այսպէս՝
երբ եղիկի վերեւում մէջ բերուած հատ-
ուածում կարգում ենք՝

ոչ ի մի միայն կողմն ի հանդէպ երե-
սացն եւեթ արշաւին, այլ յամենայն կող-
ման վարդին եւ ընդհանուր արշաւին եւ
ընդ բնաւ ալանան եւ ամենայնի բաւական

են: Յորժամ ընդ արեւելս ընթանան չէ ինչ
արդիւ թէ ընդ արեւմուտս ոչ արշաւիցին,
եւ յորժամ ընդ հիւսիսի վարդին, չէ ինչ
արգիւ թէ ընդ հարաւ ոչ սուրայցեն, զի
ձեռն կառավարին բաւական է յամենայն
կողմանս զիմեցուցանել եւ ընդ չորս աւ-
կիւնս տիեզերաց արշաւեցուցանել: —

Տեսնում ենք որ միեւնոյն «պղել
կամ արշաւել» բառը կրկնուած է 6 ան-
գամ տարբեր հոմանիշներով. այսպէս՝ ար-
շաւին, վարդին, ալանան, ընթանան, սու-
րալ, զիմեցուցանել: — միեւնոյն «ամէն
կողմ» բառը կրկնուած է 4 անգամ տար-
բեր ձեւերով. յամենայն կողմանս, ընդհա-
նուր, ընդ բնաւ, ընդ չորս անկիւնս եւն:
Նոյնպէս երբ Բուզանդ Դ.ը գրում է.

Եւ սկիզբն գործակալութեանն հազա-
բապետութեանն աշխարհատեսն խնամակա-
լութեանն, աշխարհաշէն աշխարհատաած գեհ-
կանութեան, շինականաշէն ազգն Գնուն-
եաց՝ հազարապետն ամենայն երկրին: Նոյն-
պէս Ստրատելատութեան սպարապետու-
թեանն զօրավարութեանն մարտի կռուելոյ
գործոյ ռազմիկ հակատամուզ Նիզակին ի-
րափառն աղանազգիք աղանազորօջ ար-
ծուենշանք վարժնականիչք աներկիւղք քա-
ջախիտք նահատակք քաջնուենք բարե-
նշանք բարեհամբաւ բարեգործք յաջողակք
ի գործ պատերազմաց ի բուն ի նախնացն
կարգեաց: ...

Կամ նոյն Գ.ի Եւ այնչափ զայրա-
ցոյց գրգռեաց յուզեաց զրդեաց սրտմտե-
ցոյց բարկացոյց:

Կամ Բուզ. էջ 93, Սկսաւ նքողել ծա-
րաւել նուաղել եւ ներգեւել գործովել ի
քաղցոյ ի ծարաւոյ:

Սրանց մէջ ուրիշ ոչինչ չենք տեսնում,
եթէ ոչ հոմանիշների գանազան խմբակցու-
թիւններ՝ ճոխութեամբ և առատութեամբ
գործածուած: Ոսկեղաբեան եղիկականների
լեզուի այս ճոխութիւնը ցայտով կերպով
ներշնչել է գալիս յայտնապէս այն ժամա-
նակ, երբ մարդ համեմատում է յունարե-
նից կատարուած հայերէն թարգմանութիւն-
ները բնագրի հետ, օրինակ՝ Սեթագի յու-
նարէն բնագրում կարգում ենք

ակմաղնի քա՛ռ տա՛ հե՛քատա կա՛յ
լե՛գեյ պա՛ղին
հայերէն դարձել է
անէ՛ քայ՛ հասանէ՛ յատիս եւ դարձեալ

միևսանգամ անդրէն դադարէ. ուր միայն ակադադո «ծաղիկը, դարգանալը» բայի դէմ գրուած է չորս բառ և պալին մակբայի դէմ երեք բառ:

Արտաքին նշանները շատ աւելի բնորոշ և հասկանալի են: Թուենք նրանցից կարեւորները.

1. Ոսկեդարեան հայերէնը չգիտէ մի խումբ բառեր, որոնք սովորական են յետին հայերէնի մէջ. ինչպէս՝ փարթամ, վսեմ, վեհ, տրիփ, բայ, սեռ, տառ, կենցաղ, սազարթ, հրաշք, փեթակ, տեսակ, տափանք, տրոհել, հրճուիլ, որոնց փոխարէն ունի տարբեր ասանելիներ ինչպէս՝ հրաշք բառի տեղ ասուում է զօրութիւն, արուեստ, նշան, սքանչելիք. — փեթակ բառի տեղ գործ է ածուում մեղաւանդ. — տեսակ բառի տեղ ազգ եւն եւն: Կան և այսպիսի ամանց բառեր. ինչպէս՝ գեղջուկ, վաղեմի եւն:

2. Մի խումբ բառեր ոսկեդարեան հայերէնում ձեւով փոքր ինչ տարբեր են. ինչպէս՝ արծուի, հիւսիսի, պատասխանի, արուեստ փոխանակ արծիւ, հիւսիս, պատասխան, արհեստ՝ որոնք յետին են:

3. Վպա, առ, բազ, բաց, գեր, դեր, ենթ, հոս, մակ, յար, ներ, շաղ, շար, պար, վայր, վեր, տար, տրամ, ստոր, փաղ մասնիկներով սկսող բառերը չեն զբաղւում Ոսկեդարեան հայերէնի մէջ:

4. Ամէն բառը ոսկեդարեան հայերէնում կարող է բարդուիլ միայն բայարմատի հետ և ոչ թէ ամականների հետ. ուրիշ խօսքով նշանակում է «ամէն բան», մինչդեռ յետին հայերէնում նշանակում է աւամէնից աւելի: Եւ դարձել է գերադրական մասնիկ՝ Այսպէս ոսկեդարեան են ամենագէտ «ամէն բան զիտող», ամենահարաւան «ամէն նարող», ամենակեցողջ «ամենքին ապրեցնող», որովհետեւ կազմուած են հնարիւր՝ գիտել, կեցուցանել բայերի արմատներից: Բայց յետին են ամենարարի, ամենազեղեցիկ, ամենամեծ են. որովհետեւ կազմուած են քարի, գեղեցիկ և մեծ ամականներից:

5. Աւեր մասնիկով կազմուած իգական բառերը չեն գործ ածուում. ինչպէս՝ սրբուհի, Խորուհի, մաքրուհի, իշխանուհի, երանուհի, մինչև անգամ թագուհի ոսկեդարեան հայերէնում իգական կազմուած

համար գրուում է կին բառը՝ պարզ կամ բարդութեամբ. Զայր հզոր եւ զկին զօրաւոր, իշխանակին:

6. Զան մասնիկը՝ որ այնպէս սովորական է յետին հայերէնի մէջ, բնաւ չի գործածուում ոսկեդարեան հայերէնում. ինչպէս՝ այլապէս, սրապէս, հրապէս են. ևն. այս բոլորը օտար են. կայ միայն դասապէս:

7. Զեմ մասնիկը՝ որ նոյնպէս յետին հայերէնի մէջ սիրելի մի ձև է իսպառ անգործածական է ոսկեդարեան հայերէնում. ինչպէս՝ լուսանձեմ, երկնանձեմ, վեհանձեմ եւայլն:

8. Ային մասնիկը անսովոր չէ ոսկեդարեան հայերէնում, բայց գործածուում է միայն տեղական բառերի հետ. օրինակ՝ կարելի է ասել լեւնային, դաշտային, քաղաքային, հարաւային, հիւսիսային, ցամաքային, բայց կարելի չէ ասել երկնային, աստուածային, մարդկային, որոնք յետին ձեւեր են. ոսկեդարեան հայերէնում սրանց փոխարէն գործ է ածուում երկնաւոր, երկնաւորական, աստուածական, կամ աստուածեղէն, մարդեղէն եւն:

9. Ան մասնիկով կազմուած բացասական բառերը չեն կարող իրենց վերջում կրել ելի մասնիկը. այսպէս յետին են անշարժելի, անայլալիւի, անխախտելի, անսասանելի են. բառերը, որոնց համապատասխան ոսկեդարեան հայերէն ձեւերն են անշարժ, անայլալ, անխախտ, անսասան են: Կան նաեւ անզննական, անբժշկական, կամ առանց զննելոյ, անհնարին առի բժշկութիւն են. բայց ոչ բնաւ անելի:

10. Ող և եւլ ձեւով ընդունելութիւնները շատ սովորական չեն ոսկեդարեան հայերէնում. այս ձեւերը կազմուում են յարաբերականով. ինչպէս՝ որ շարժե, որ միտին, որ շարժին և փոփոխի, փոխանակ ասելու՝ շարժուել, զարժուել, շարժեալն և փոփոխեալն. — Ելելի, էլ ԶՅ գրում է քան զի յորում իցէ ոք այն յորում էն, քան զայն որ ի նմա էն՝ մեծ գտանի. փոխանակ ասելու «պարունակողը պարունակեալից մեծ է»:

11. Երկրորդ լծորդութեան բայերի անորոշի վերջաւորութիւնն է Էլ և ոչ թէ իլ, թէև բայը խոնարհուում է իմ ձեւով. ինչպէս՝ խօսել-խօսիմ, համարել-համա-

րիմ, պատշաճել—պատշաճում են, իսկ խօսակցի, համարիչ, պատշաճիչ ձևերը յետին հայերէն են: Այս հանգամանքը յաճախ պատճառ է դառնում որ ներգրծական և կրաւորական բայերը շփոթուին իրար հետ. այս պարագային սակեղարեան հայերէնը մի յարմարաւոր գարծուածով դուրս է գալիս զժուար գրութիւնից. այսպէս ըստ Սեդիկի էջ 15, չեմ արժանի պաշտօն առնելոյ՝ այլ պաշտօն հարկանելոյ:

12. Ոսկեդարեան հայերէնի սիրելի ձևերից է նոյն բառով կազմուած բարդօսութիւնները գործածել մօտ մօտի, ինչպէս՝ Զօրացուցանէ զանգուրս մեծագոր զօրուսթեան եւ ինքն ոչ թերանայ ի զօրացուցիչ զօրութեանէն. եւ պարզեւէ գիտութիւն տմենայն անգլխաց եւ ինքն բաւանդակ ունի յինքնան զամենագէտ գիտութիւնն (Սեդիկ էջ 8). Ռեմպայտիւ մեծպարզեւ մեծարեաց զնա (Քուզ. Գ. Ժ). Այլ էութեան ձեւաւանաց իրիք խառնել, այլ գոյանալոյ գոյացելոցն գոյարար (Սեդիկ էջ 239):

13. Պատենի բայը, ինչպէս յայտնի է, ունի երկու նշանակութիւն. — «խառնել, յօգել, միաւորել» և «խառնակել». ոսկեւ դարեան հայերէնում առաջին իմաստով իսան գրուում է բարդութեանց վերջը, իսկ երկրորդ իմաստով՝ սկիզբը. հմմտ. ձագախառն, ջրախառն, հողախառն և խառնախօս, խառնածին, խառնապաղան են: Յետին հայերէնի մէջ այս նրբութիւնը չկայ:

14. Երբեմն ոսկեդարեան հայերէնի բառերը թէ՛ ձեւով և թէ՛ նշանակութեամբ տարբերում են յետիններից. ինչպէս՝ Ոսկեդարում առաստանիք նշանակում է «ցուրտ քամի». իսկ յետին հայերէնում սառնամանիք է բառը և նշանակում է «սառցոյց» երկուսի տարբերութիւնը տեսնելու համար հմմտ. Սեդիկ 17. Կամ ոգք երբեմն զստուկ ամսնխն շնչելով և երբեմն զխորշակն բնրելով. իսկ Սեդիկն ասում է՝ բազում ձմեռաց հայեցան սառնամանիք:

15. Շատ անգամ յետին հայերէնը դործածում է մի բայ, որի տեղ Ոսկեդարը մի ամբողջ տաացուածք միայն ունի. ինչպէս՝ պատասխանի տալ կամ առնել՝ փոխանակ պատասխանել, աղօթիլ առնել, աղօթիլ մատուցանել՝ փոխանակ աղօթիլ. նոյնպէս ոգալուել, ուրախանալ, ուրախացուցանել են:

16. Փոխանակ ան բացասական մասա

ՓԵՐՔԵՐՈՒ ԶԵՅ

ՀՈՂԸ

ԵԴ. ՊՕՅԱՃԵԱՆ

(1948, Հալիպ, Տպագրութիւն ՆԱՅԻՒՐ)

Յգ. Պօյանեան պատմութեան իր այս հատորով, Քիլատինցիի, Զարգարեանի զպրոցիի շարժումն ու աւանդութիւնն է որ կը վերբերէ: Այդ զպրոցին կը պատկանին Համատեղին ու Շուրիկիանը, ինչպէս նաև Արամ Հայկազը, Սթէ յաջողութիւնը հաւաքար կերպով չի բաշխուի որ Պօյանեանի գործերուն մէջ, համեմատաբար նախորդ ներուն — ընդունելով հանդերձ սնշույտ անոնց ալ՝ առաջնակարգի և երկրորդականի

նիկի՝ Ոսկեդարում շատ անգամ գտնում ենք առաջին նախագրութեամբ կազմուած ձևեր. ինչպէս՝ առանց հասանելոյ «անհաս», առանց գիտութեան «անգէտ», առանց շիջանելոյ «անշիջ», առանց պատասխանի տալոյ «անպատասխանի», առանց գող ական հատանելոյ է բնակութիւնն ճշտակութիւնը ապահով է:

17. Գաղաքների և երկիրների անունները կազմում են յատկացուցիչով. ինչպէս՝ աշխարհ Պաղեստինացւոց (Պաղեստին), աշխարհ Հայոց (Հայաստան), քաղաք Հոռոմացւոց (Հոռոմ), քաղաք Երուսաղեմացւոց (Երուսաղեմ) և:

Այս բոլորից դուրս կան բազմաթիւ մասնաւոր ձևեր, ոճեր կամ դարձուածներ և ասութիւններ, որոնք յատուկ են միայն ոսկեդարեան հայերէնին և անծանօթ յետին հայերէնին, քայքայ յայդ բոլորը մի առ մի բովորեցնել՝ բառարանի եւ քերականութեան գործն է:

Իրք որ յօրինեց ինչեւք որ երկիրների աւանդների մէջ թէ՛ կարելի է ասել Պարսկաստան, Հրէաստան, Ասորեստան, Տաւրկաստան, բայց երբեք կարելի է ասել Հայաստան, այլ միայն Հայաստան աշխարհ, Հայաստան երկիր, աշխարհ Հայոց, երկիր Հայոց:

(Դոմ.) ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ